

գականներն որպէս վիճակների առաջնորդներ արձանագրուած են կառավարութեան գիւանի մէջ և կառավարութեան աչքին կասկածելի եկեղեցական չը կայ, ուստի և ընտրելիների ցանկը ներկայացնելու կարիք չը կայ, մանաւանդ որ այդ դրութիւնը նախորդ շրջանի յոսի արգիւնքներից մէկն է:

Երբ այս առաջարկութեան համար առարկութիւն լինի դատական նախարարութեան կողմից, այն ժամանակ երես. ժողովը կը պատրաստի հնդանուն ցանկը:



Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՊՐՈՒՍՍԼԱԻ ԵԿԵՂԵՅԻ

(Церк. Вѣст.)

Սրբազնագոյն Սինոդը զգալով կեսաթոշակ հաստատուելու անհրաժեշտութիւնը հոգևոր դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների համար, յարաբերութեան մէջ է մտել պատշաճ նախարարութիւնների հետ, և Սինոդի ուսումնարանական յանձնաժողովի ծրագիրը քննուել է Ս. Սինոդի օրեր պրօկուրօրի օգնականի նախագահութեամբ և միւս նախարարութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Մասնաժողովում մարտի 12-ին քննուելով կենսաթոշակի ծրագիրը, հաւանութիւն է գտել հոգևոր դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների կենսաթոշակի յատուկ դրամարկղ կազմելը անկախ միւս հաստատութիւնների նման դրամարկղից: Ուսուցիչների կենսաթոշակի դրամարկղին նպաստ պէտք է տայ կամ ոչ պետական գանձարանը, կը քննուի մարտի 19-ին ժողովում:

— Մասկվայի բարեկարգիչների ժողովը կանոններ է մշակել քննելու եկեղեցական պաշտօնեաների թեթև գործերը, որոնք վերաբերում են նրանց հոգևոր պաշտօնավարութեան և տնտեսական կացութեան:

Բարեկարգչական խորհրդի բաղկացութեան մէջ մտնում են բարեկարգիչը որպէս նախագահ և բարեկարգչ-

չական ժողովում ընտրուած ու Մոսկվայի մետրոպոլիտից հաստատուած երկու քահանաներ եռամեայ ժամանակով: Խորհրդի այս երկու անդամների ընտրութիւնը կատարուած է բարեկարգչական շրջանի բոլոր եկեղեցական սրբազնագործ պաշտօնեաների մասնակցութեամբ, ուր քահանան ունի մի ձայն, սարկաւազը $\frac{1}{2}$, և սաղմոսասացը $\frac{1}{4}$ ձայն:

Ընդունելի չեն կարող լինել, դատի տակ եղողները, և նրանք, որոնք ենթարկուել են դատի տուգանքի, և այս մտած է նրանց ծառայական ցուցակի մէջ,

Բարեկարգչական խորհրդի իրաւասութեան ենթակայ են.

1, Սրբազնագործ-եկեղեցական պաշտօնեաների զանցառութիւնները պարտականութեան և վարքի վերաբերութեամբ, որոնք յայտնի վրաս կամ գայթակղութիւն չեն առաջացրել և առաջին անգամն է: Այս զանցառութիւններն են. սարկաւազի կամ դպրի ներկայ չը լինելը կամ ուշանալը ժամերգութեանը և արարողութիւններին, ինքնակամ բացակայութիւնը, կոպիտ վարմունքը գէպի եկեղեցու աւագերէցը:

2, Եկեղեցու միաբանների մէջ ծագած թուրիմացութիւնները զանձանակի, եկեղեցական հողից և շինութիւններից օգտուելու մասին:

Վհասի հատուցումն մինչև 25 ռ. և մինչև 100 ռ. անվիճելի պարտքի պահանջը: Հոգևորականների որբերի և այրիների վէճերը եկեղեցու միաբանների հետ, որոնք կարող են փոխադարձ համաձայնութեամբ վերջանալ:

3, Ծխականների բողոքը տեղական հոգևորականութեան վերայ, երբ վերջիններս խուսափում են հոգևոր պահանջները կատարել, քաղուածներ և վկայականներ տալ եկեղեցական դօկումենտների համեմատ և չն. գործավարութիւնը տեղի է ունենում կամ բարեկարգչի բերանացի ծանուցմամբ կամ գրաւոր յայտարարութեամբ: Գործերն ու վճիռները արձանագրուում են կոնսիստորիայից տուած մատեանում: Բարեկարգչական խորհրդի վրճ-

ուից գժգոհները կարող են բողոքել թեմական իշխանութեան մի ամսուայ ընթացքում:

Բարեկարգիչները պարտաւոր են գործերի համար իւրաքանչիւր տարի մանրամասն հաշիւ ներկայացնել մետրոպօլիին:

Մարտի 13-ին նիստում Ս. Սինօզը աւարտեց Հոգևոր ճեմարանների նոր կանոնադրութեան քննութիւնը: Ծուտով այդ կանոնադրութիւնը կը մատուցուի պատշաճ իշխանութեան ի հաստատութիւն, և կը գործադրուի 1911 թուից:

ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵԿԵՂԵՅԻ

Մարտի 3-ին վերջացել է յունաց պատրիարքական տագնապը: Տ. Յովակիմ պատրիարքը ընդունել է Սինօզին անդամակցող 11 մետրոպօլիաների տեսակէտը: Եւ Խառն ժողովի քաղաքական անդամներին հրաւիրելով ասել է. «Իբրև պատրիարք, իբրև հայր և իբրև մարգ ձեզնից խնդրում եմ, որ նկատողութեան առնէք, թէ ազգի գերագոյն շահերի համար և ազգի այժմեան վիճակը ի նկատի ունենալով որոշեցի Յունվարի 12-ին նիստի տեղեկագիրին հաւանել, վաղը պէտք է նախագահեմ Սինօզի նիստին և գործակցութիւնս վերսկսեմ: Սակայն ինձ եմ վերապահում ներկայացնել դիտողութիւններս: Չեր յայտնած յարգանքի ու վստահութեան համար երախտագիտութիւնս յայտնելով խնդրում եմ, որ հաւանէք այս որոշումիս»:

Մարտի 4-ին Սինօզը գումարուել է Տ. Յովակիմ պատրիարքի նախագահութեամբ: Պատրիարքի և մետրոպօլիտների հանդիպումն շատ սրտաշարժ է եղել: Այն մետրոպօլիտները, որոնց պատճառով ծագել էր պատրիարքական տագնապը, որոնց հակառակ էր պատրիարքը մօտիկ ժամանակում կը հրաւիրուեն Սինօզի նիստերին մասնակցելու:

Մ Ի Ս Ի Յ Ն Ա Ր Ա Կ Ա Ն, Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ.

1910-ի Յուլիս ամսին Էդինբուրգում

Գ ու մ ա ռ ու ե լ ե բ Համաշխարհային Միասնօճարական

Յանձնաժողովը (Worlds' missionary Conference 1910)

Շատ շրջաններում մի տիրող տրամադրութիւն կայ կասկածով վերաբերուելու յանձնաժողովների օգտակարութեանը. այդ կասկածին յարողները իրաւացի կերպով նկատել են, թէ այդ տեսակի ձեռնարկութիւնները բաւականաչափ մտածողութիւն, ժամանակ և եռանդ են սպառում, որ շատ անգամ աւելի ցանկալի կլինէր նուիրել հէնց այն խաղաղ ու հաստատուն դատին, որի համար այդ ժողովները կազմակերպուել էին։ Այն բանը, որ եթէ կարելի լինէր աշխարհը բարեկարգել բոլորն ոգևորութեամբ լի ժողովներով, ճարտասանութեամբ և մեծահատոր տեղեկագրներով այդ ցանկալի արդիւնքին մարդիկ արդէն շատուցի վեր պէտք է հասած լինէին։ Ուրեմն առաջ քան թէ գրելու վերոյիշեալ յանձնաժողովի ծրագրի մասին, կարծեմ՝ անտեղի չի լինիլ մի երկու խօսք ասել այն շարժառիթների մասին, որոնք կարծել են տալիս թէ համաշխարհային մեռնօճարական այս ժողովը չպիտի լինի աշխատանքի և եռանդի ի դուր վատնում, այլ դորձնական կերպով այդ պիտի նպաստէ քրիստոնեայ աշխարհի բոլոր իղձերի ու փափագների իրագործմանը։

Ամենից առաջ աշխարհիս երեսին ներկայ տիրող հանգամանքները ստիպողական ու լուրջ ուշադրութիւն են պահանջում քրիստոնէական եկեղեցուց։ Մտքի և գործի ամեն մի ասպարիզում խնդիրները դուրս են եկել այն երբեմնեան դրութիւնից, որ կարող էին վճռուել Եւրոպայի կամ Հիւսիսային Ամերիկայի բացառիկ միջամտութեամբ. նոքա այժմ աւելի ստանում և ստացել են համաշխարհային բնոյթ և ժամանակ է, որ եկեղեցին սովորի նայել մարդկութեանը իբրև մի ամբողջութեան, եթէ

ուղում է գոյութիւն ունենալ գալիք սերունդների համար։ Ասիայի զանազան երկիրներում տիրող նոր շարժումները մի ահադին ոյժ են ներկայացնում, որ եկեղեցին նկատողութեան պիտի առնի և ջանայ ուղիղ ճանապարհի վրայ դնել։ Կոնգո—ի կառավարութեան գիրքը և հարաւային Աֆրիկայի բնիկների հարցը, որ հասարակութեան ուշադրութեան գլխաւոր առարկան են կադմում, ցոյց են տալիս այն հանգամանքը, թէ ինչքան բարոյական բարդ խնդիրներ են պարունակում քրիստոնեայ աշխարհի և աֆրիկացիների յարաբերութիւնները։ Այս տեսակ ծանր ու նշանակալից խնդիրների գոյութիւնը կհաստատէ այն վաստը, թէ անարգար պիտ լինէր, եթէ քրիստոնեայ եկեղեցին հարկաւոր եղած ուշադրութիւն չդարձնէր դէպի այս տեսակ կարեւոր ու կենսական խնդիրները։

Այս համաշխարհային յանձնաժողովը ամենից լուրջ ջանքն է, որ եկեղեցին մինչև այժմ արել է քննելու ամբողջ ոչ քրիստոնեայ աշխարհի հարցը։ Այն բոլոր անձինք, որոնք թէկուզ ամենաազօտ կերպով զգացել են այն բոլոր խնդիրների բարդութիւնը և լրջութիւնը, որոնք ստեղծուել են ներկայումս ազգերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ, և որոնք հաւատում են, որ կրօնը մարդկային կեանքի հիմնական և կարեւոր խնդիրներից մէկն է, անշուշտ չեն կասկածի այս ժողովի անհրաժեշտութեան վրայ։ Այս ժողովը ոչ մի կերպով նպատակ չունի եկեղեցու ուշադրութիւնը գրաւելու կամ երևակայութիւնը բորբոքելու։ Սա մի անկեղծ փորձ է մի լուրջ դործի համար, որ նպատակ ունի մի այնպիսի ելք փնտռելու միասնօնարական դործի համար, որպիսին ժամանակի տաքնապալից վիճակը պահանջում է և այս դործը կատարուում է մի այնպիսի ընդարձակ ծրագրով, որպիսին մինչև այժմ չի եղել։ Ութը հետախուզող մասնաժողովներ (commissions), ամեն մէկը բաղկացած 20-ական ականաւոր անձերից, աշխատանքի են ձեռնարկել համաժողովից 18 ամիս առաջ։ Այդ ականաւոր անձանց շար-

քում են եւրոպայի և Ամերիկայի միասփոնարական գործի գիտնական զեկավարները և առաջնորդները, բացի սրբայից շատ նշանաւոր աստուածաբաններ, մանկավարժներ, սոսուցչապետներ և մարդիկ, որ մեծ գիրք են գրաւում հասարակութեան մէջ, նուիրել ու նուիրում են իրենց առանձնայատուկ ձիրքերն ու փորձառութիւնը այս մեծ գործին: Այս մասնաժողովների արգելւիքները խիստ տեսական ու ակադեմիկ լինելը արգելելու համար նշանակուած են ամեն մէկի համար երեք կամ չորս անգամներ, որոնք օտար երկիրների միասփոնարական գործում տարիների փորձառութիւն ունեն: Ամեն մի մասնաժողովի հետ գործակցել են 100-ից մինչև 500 առաջնորդող ընդհանուր և օտար միասփոնար գործիչներ, որոնցից 100-աւոր գնահատելի յօդուածներ են ստացուել զանազան խնդիրների մասին: Այս յօդուածները մի կերպ պատասխան են խնամքով պատրաստուած հարցերի, որը ժամանակին կեդրոնական կազմակերպող ժողովը ուղարկել է նրանց և այժմ զբաղուած է ստացուած պատասխանների մանրակրկիտ հետազոտութեամբ:

Այս բաղձալի և դժուար գործի յաջողութիւնը կախուած է այն բանից, թէ այդ ինչպէս կզեկավարուի: Եթէ այդ կատարուեց այնպէս ինչպէս ցանկալի է, այն ժամանակ մասնաժողովների տեղեկագիրը մի անզուգական հեղինակութիւն կդառնայ, որին ամեն ոք կարող կլինի դիմել միասփոնարական հարցը լրիւ կերպով ուսումնասիրելու համար: Աւելի կարևոր կլինի այն կազմուելիզ զարկը, որը եկեղեցու մտաւորական մասը կստանայ այս տեսակի մի ընդարձակ ու լուրջ հետազոտութիւնից: Մինչդեռ տարբեր միասփոնարական ընկերութեանց գործելակերպը և ունեցած արգելւիքների ուշադիր համեմատութիւնը անսահմանօրէն շահեկան պէտք է լինի և կարելի պիտի դարձնի համաշխարհային եկեղեցու համար կազմակերպել մի միասփոնարական քաղաքականութիւն և գործելակերպ, ինչպիսին ներկայ հանգամանքները անհրաժեշտ կգարձնեն: Յանձնաժողովի մի այլ հանգամանք, որ

շատերին հետաքրքրում է, այն է, որ այդ կարող է մեծապէս նպաստել քրիստոնէական եկեղեցու միութեան գործին: Զարմանալի չէ տեսնել, որ շատ խոհուն անձինք քրիստոնէութեան ապագայ յաղթանակը մի ընդհանուր միացեալ եկեղեցու մէջ են տեսնում:

Եկեղեցու միութեան գործին յանձնաժողովը ձեռընհաս չպիտի լինի ուղղակի կերպով նպաստելու: Այդ տեսակ մի գործի շահեկանօրէն դատելու և իրագործելու խնդիրը պէտք ունի նախապատրաստական ջանքերի, դեռ պէտք է պատրաստել քրիստոնեայ մարդկութեան սրտերն ու մտքերը այդ երջանիկ օրուայ համար: Այս հարցը, թէ քրիստոնեաները իբրև մի ամբողջութիւն պիտի աչքի առաջ ունենան ոչ քրիստոնեայ աշխարհը և իրենց պարտականութիւն դէպի նրանց՝ աւելի կարևոր կլինի միութեան գործը առաջ մղելու համար, քան թէ վաղաժամ վիճարանութիւնները:


Յանձնաժողովի համար ծախսում է միայն Անգլիայում 7000 անգլիական ոսկի, իսկ Եւրոպայի և Ամերիկայի ներկայացուցիչների ծախսը դրանից էլ աւելի կլինի: Պաշտօնական ներկայացուցիչների թիւը ակնկալում է որ 1100-ի պիտի հասնի, որոնց ժողովները տեղի կունենան Assembly Hall-ի մէջ: Մի այլ շարք զուգընթաց ժողովներ ևս պիտի կազմակերպուին «Aynod Hall»-ի մէջ 2000 անձանց համար, որին ներկայ կլինին բարձրաստիճան հոգևորականներ, հոշակաւոր աշխարհականներ և մարդիկ, որոնք իրենց կեանքը նուիրել են մատաղ սերնդի դաստիարակութեան գործին: Բացի այս երկու ժողովներից մի շարք ժողովներ ևս կլինին երեկոները էդինբուրգի և Պլազզօ-ի մէջ հասարակութեան համար: Ժողովները կըսկսուէին Յունիսի 8-ին և կվերջանան Յուլիսի 27-ին:

Մասնաժողովների արած հետազօտութիւնների արդիւնքները, ժողովների և յանձնաժողովի նիստերի րուպէագրութիւնները և այլ կարևոր օւսումնասիրութիւնները քրիստոնէութեան տարածման գործի մասին կտպագրուեն 9 առանձին հատորներով, որոնցից ամեն մէկը 3—400

էջից պիտի բաղկացած լինի: Այս տեսակի մի մեծ աշխատութիւն ամենի համար ձեռնատու, մատչելի և ինչքան կարելի է արժան դարձնելու համար ոչ մի ջանք չի խնայուի: Օտար երկրների համար գինը 18 շիլին է լինելու ճանապարհածախսով:

Ռուսնոյ Մ. Բ.

Էգինբուրգ (Սկովաիա)
14-ն Մարտի 1910 (ն. Տ.)



Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ռ Ա Գ Ի Ի Ղ Ի Ա Խ Ե Ր Ո Ւ Մ Ը

Ա Ձ Դ .

1905 ու 1906 թուականներէ Հայ-թրքական ընդհարումները յանկարծակի ծնունդ չէին, այլ հատարակային կաղմալուծութեան և բաղաբական կեանքի արտայայտութիւններ: Դրանց լուսաբանելը ապագայ պատմաբանի գործն է որ ներկայ սերնդից կպահանջի կարելոյն չափ շատ պատմական նիւթերի մատակարարումն: Այժմ, երբ այդ շարաբաստ ընդհարումները վերջացել են և մտքերը հանգարտել՝ մեզ, ականատեսներին և ժամանակակիցներին վերայ պարտք կայ անկողմնապահութեամբ ամփոփել և դասուորել նիւթերը ապագայ պատմչի գործը զիւրացնելու համար:

Ձեռնարկելով մի շարք ընդհարումների ժողովածու՝ աշխատութեանս հեղինակը աչքի առաջ է ունեցել վերոյիշեալ նպատակը:

Ներկայումս տալով Բագայի աւերման պատմութիւնը, հեղինակը հարկ է համարում ծանուցանել, որ նա իւր նիւթերը ժողովել է 1906 ու 1907-ին անմիջապէս այն՝ ոչ սակաւաթիւ արժանահաւատ անձինքներից, որոնք ենթարկուել են ազեաին ու ականատես են եղած:

Նիւթերը արձանագրուած են համեմատական վերաստուգութեամբ և կարելոյն չափ անկողմնապահութեամբ.

1909 թ. Յուլիս. Բագու.

Հեղինակ